

նեակներէն. ա՛րդ ի՞նչ կը նշանակէ Ս. Պատրիարքին այս մասին Խրիմեանէ տեղեկութիւն ուզելն:

Զարմանալի՛ քան... որպէս թէ բոլոր եպիսկոպոս ձեռնադրուածներն արժանի լինէին եպիսկոպոսութեան...:

13 Յուլիս

Ստոյգ վիճակագրութեան մը նայելով՝ Պօլսոյ Հայերն այսօր ունին երեք հազար չորս հարիւր գինետուն, երեք գրավաճառի խանութ, հազար երկու հարիւր պարի դասատու, հինգ հայկաբանութեան դասատու, երկու հազար զբօսարան, երեք թանգարան, չորս հազար ծրար խաղի թուղթ, հինգ լրագիր:

Եւ այս վիճակագրութիւնը հերիք է Պօլսոյ Հայերու բարոյական վիճակը ցոյց տալու:

**

Տրապզոնէն շարունակ զօրք կու գայ հոս... շատ ապացոյցներ ունինք հաւատալու, որ մեր կառավարութիւնն Յունաստանի դէմ պիտի պատերազմի:

Լրագիր մը կը ծանուցանէ, որ Գարատաղի եւ Ալպանիացիներու մէջ տեղ պզտիկ կռիւներ տեղի ունեցած են:

Ուրիշ լրագիր մ'ալ կը ծանուցանէ, թէ Գարատաղի եւ Ալպանիացիներու մէջ տեղ կռիւներ տեղի ունեցած չեն:

Պօլսոյ մէջ լրագիր մը պէտք է, որուն պաշտօնն ըլլար միայն սուտ լուրերը հերքել:

14 Յուլիս

Այսօր Պօլիս եկաւ Պ. Սըռ Ռիվըրս Ուիլսըն, որ ասկէ առաջ Եգիպտոսի ելմտական վիճակը բարւոքելու համար Անգղիայէն պատուիրակ գնացած էր Գահիրէ:

Այլ եւ այլ մեկնութիւններ կտրուին այս անձին հոս գալուն վրայ:

Եթէ քանի մը օրէն մեկնի՝ նորէն մեկնութիւններ պիտի տրուին:

Խմբագիրներն իրենց լրագիրները քշելու համար այն տեսակ լուրեր միայն կու տան, զորս ժողովուրդը մեծ հաճութեամբ կկարդայ: